Համախմբված ֆինանսական հաշվետվություններև Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» ՀԿ

31 դեկտեմբերի 2020թ.

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» ՀԿ-ի խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» ՀԿ-ի (Մայր ընկերություն) և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Խմբի 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի 2020թ. սեպտեմբերի 7-ին թվագրված հաշվետվությունն արտահայտել է չձևափոխված կարծիք: Ի հավելումն, ինչպես ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում, այս համախմբված ֆինանսական

հաշվետվությունները վերաներկայացվել են ղեկավարության կողմից: Մենք աուդիտի ենք ենթարկել նաև այդ վերաներկայացումները:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Խմբի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին՝ ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

30 հունիսի 2021թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	755,333	693,844
Ոչ նյութական ակտիվներ		20,793	9,365
Հետաձգված հարկային ակտիվներ		764	764
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		-	580
		776,890	704,553
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	656,475	188,277
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	30,164	27,453
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7	774,246	247,274
		1,460,885	463,004
Ընդամենը ակտիվներ		2,237,775	1,167,557

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		336,410	357,793
		336,410	357,793
Չվերահսկվող բաժնեմաս		126,237	152,371
		462,647	510,164
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	334,803	328,421
		334,803	328,421
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամտին վերաբերող շնորհներ	9	1,372,177	253,813
Վարկեր և փոխառություններ	10	-	31,579
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	66,415	43,394
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		1,733	186
		1,440,325	328,972
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		2,237,775	1,167,557

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 30-ին՝

Աննա Եղիազարյան
Գլխավոր քարտուղար

Սարիամ Կնյազյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներ-կայացված)
Նվիրատվությունից եկամուտ	12	2,877,896	990,871
Հասույթ հիվանդանոցային ծառայություններից		161,933	309,981
Ակտիվների արժեզրկման հակադարձումից եկամուտ		-	115,067
Այլ ծառայություններից եկամուտ		21,963	3,524
Այլ եկամուտ		2,264	10,584
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(645,494)	(452,527)
Շահառուներին տրամադրված գույք և պաշարներ		(1,290,549)	(127,525)
Շահառուներին տրամադրված ֆինանսական օժանդակություն		(437,867)	(227,383)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(89,494)	(79,091)
Վերապատրաստման ծախսեր		(62,279)	(76,756)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(111,173)	(25,758)
Օգտագործված պաշարներ		(330,869)	(100,832)
Մասնագիտական ծառայություններ		(19,081)	(16,260)
Մաշվածության և պահպանման ծախսերը		(68,633)	(70,861)
Գույքի սպասարկման ծախսեր		(7,837)	(7,162)
Այլ ծախսեր		(76,216)	(80,184)
Գործառնական շահույթ		(75,436)	165,688
Ֆինանսական եկամուտ/(ծախս)		3,276	(2,474)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		26,376	(2,925)
Շահույթ մինչև հարկերը		(45,784)	160,289
Շահութահարկի գծով ծախս	13	(1,733)	(13,333)
Տարվա շահույթ/(վնաս)		(47,517)	146,956
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(47,517)	146,956
Այդ թվում			
Վերահսկվող բաժնեմաս		(21,383)	146,956
Չվերահսկվող բաժնեմաս		(26,134)	-
		(47,517)	146,956

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը վերահսկվող բաժնեմաս	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը
2019թ. հունվարի 31-ի դրությամբ	210,837	210,837	-	210,837
Թողարկված բաժնեմասեր	-	-	152,371	152,371
Տարվա շահույթ	146,956	146,956	-	146,956
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	146,956	146,956	152,371	299,327
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	357,793	357,793	152,371	510,164
Տարվա վնաս	(21,383)	(21,383)	(26,134)	(47,517)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(21,383)	(21,383)	(26,134)	(47,517)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	336,410	336,410	126,237	462,647

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված նվիրատվություն	3,889,523	984,712
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	179,110	59,443
Ստացված այլ դրամական միջոցներ	704	330
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(2,177,421)	(385,290)
Շահառուներին վճարված դրամական միոցներ	(470,953)	(227,383)
Անձնակազմին վճարված դրամական միջոցներ	(708,141)	(268,091)
Շահութահարկից բացի այլ վճարված հարկեր	(53,051)	(101,223)
Վճարված տոկոսներ	(823)	(2,494)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	658,948	60,004
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(130,879)	(44,809)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	150,165
Ստացված տոկոսային եկամուտ	4,099	-
Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(126,780)	105,356
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր		
Վարկերի և փոխառությունների մարում	(31,500)	(14,190)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(31,500)	(14,190)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	500,668	151,170
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	26,304	(2,943)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	247,274	99,047
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	774,246	247,274

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիվա համար՝ «Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» ՀԿ մայր ընկերության, նրա դուստր ընկերությունների և ասոցիացված կազմակերպությունների («Խումբ») համար:

Խումբն իր գործունեությունը ծավալում է Հայաստանի Հանրապետությունում: Խումբը հասարակական կազմակերպություն է և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Խմբի գործունեության հիմնական նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում կանխել և մեղմացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասսայական, սեռային, կրոնական, դասակարգային պատկանելությունից և քաղաքական հայացքներից:

Խումբն ունի երկու դուստր ընկերություններ և երկու ասոցիացված կազմակերպություններ: Լրացուցիչ տեղեկության համար տե՛ս ծանոթագրություն 2.6:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (դրամ), եթե այլ բան նշված չէ:

Խմբի իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0015, Պարոնյան փող. 21/1:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համավարակ: Կորոնավիրուսն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Խումբը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Խմբի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 14-ում: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2020թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2020թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2020թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,*
- *Ձեռնարկատիրական գործունեության սահմանումը (ՖՀՄՍ 3 փոփոխություններ),*
- *Էականության սահմանումը (ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 փոփոխություններ),*
- *Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),*
- *COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ (ՖՀՄՍ 16 փոփոխություններ)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- *«Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2)» (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»*
- *«Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*

- *«Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)*
- *Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*
- *2018-2020թթ. ՖՀՄՍ-ների փարեկան բարեփոխումներ-(ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ):*
- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)*

2.6 Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները և ասոցիացված կազմակերպությունները.

Դուստր ընկերություն	Գրանցման երկիր	2020թ. դեկտեմբերի 31	2019թ. դեկտեմբերի 31
«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	45.04%	100%
Ֆանդրեյզինգ ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%

Ասոցիացված կազմակերպություն	Գրանցման երկիր	2020թ. դեկտեմբերի 31	2019թ. դեկտեմբերի 31
ՄԵՄ ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	45%	45%
ՄԱՆԱ ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	42%	42%

«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ն իրականացնում է ընդհանուր վերականգնողական բուժում, ողնաշարի վնասվածքներ ունեցող հիվանդների վերականգողական բուժում, առողջարանային և սպա բուժում, ինչպես նաև իրականացնում է գիտական հետազոտություններ բժշկության ոլորտում:

2019թ.-ին սեպտեմբերի 4-ի Արձանակգրություն-որոշում թիվ 108-ի հիման վրա «Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» ՀԿ-ի նախագահության նիստում որոշվեց կենտրոնի վերանորոգման, շահագործման անվտանգության ապահովման, ինչպես նաև արդիականացման նպատակով երրորդ անձանց ընդունել որպես «Գրացիա» Միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ի նոր մասնակիցներ՝ նրանց կողմից 2019թ. օգոստոսի 27-ին ներկայացված դիմումների հիման վրա, համապատասխանաբար 19.82% և 35.14% բաժնամասնակցությամբ: Մասնակիցների կողմից կանոնադրական կապիտալի ամբողջական համալրումը կատարվել է ըստ ժամանակացույցի 2019թ. ընթացքում: 2019թ.դեկտեմբերի 27-ի 26-րդ ընտրական համագումարի Արձանագրությամբ հաստատվել և հավանություն է տրվել Նախագահության թիվ 108 Արձանագրություն-որոշմանը և հաստատվել, որ համագումարի որոշմամբ սահմանված ներդրումներն ամբողջությամբ կատարվել են: Կանոնադրական կապիտալի փոփոխության մասին գրանցումը Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում կատարվել է 2020թ. հունվարի 30-ին: Արդյունքում «Գրացիա» Միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ն ունի ընդամենը 222 բաժնեմաս, որից «Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» ՀԿ-ին պատկանում է 100 բաժնամասը: Այնուամենայնիվ, «Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» ՀԿ-ն շարունակում է վերահսկել «Գրացիա» Միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ն:

Ֆանդրեյզինգ ՍՊԸ-ն տրամադրում է տեղեկատվական, տուրիստական, տրանսպորտային և գործակալական ծառայություններ, ինչպես նաև զբաղվում է կենցաղային տեխնիկայի և սննդամթերքի առևտրով:

2.7 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Խումբը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը: Տե՛ս ծանոթագրություն 19:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Համախմբման հիմքերը

Դուստր ընկերություններ

Դուստր են հանդիսանում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբն իրավունք ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Խմբի կողմից ձեռքբերված դուստր ընկերությունները հաշվառվում են գնման մեթոդով: Ձեռքբերման ժամանակ ձեռքբերված որոշելի ակտիվները, ինչպես նաև ստանձնած որոշելի պարտավորությունները և պայմանական պարտավորությունները սկզբնապես չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով՝ անկախ չվերահսկող (փոքրամասնության) բաժնեմասի չափից:

Ձեռքբերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների զուտ իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռքբերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գուդվիլ: Եթե ձեռքբերման արժեքը փոքր է ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասից, ապա տարբերությունը ճանաչվում է ուղղակիորեն շահույթում կամ վնասում:

Չվերահսկող (փոքրամասնության) բաժնեմասը դուստր ընկերության այն բաժնեմասն է, որը չի պատկանում Խմբին: Հաշվետու ամսաթվի դրությամբ չվերահսկվող բաժնեմասը դուստր ընկերության որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքի փոքրամասնության բաժնետերերի բաժնեմասն է, ինչպես նաև ձեռքբերման օրվանից սկսած՝ փոքրամասնության բաժինը սեփական կապիտալի շարժում: Չվերահսկող բաժնեմասը ներկայացվում է սեփական կապիտալում:

Փոքրամասնությանը վերագրվող վնասները դուստր ընկերության սեփական կապիտալում չեն գերազանցում չվերահսկող բաժնեմասը, եթե փոքրամասնության բաժնետերերը պարտավորված չեն իրենց վրա վերցնել կորուստները: Բոլոր նմանատիպ կորուստները բաշխվում են Խմբին:

Համախմբման արդյունքում բացառվող գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամբողջովին բացառվում են ներխմբային հաշիվների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացած բոլոր չիրացված օգուտները: Ասոցիացված ընկերությունների հետ իրականացված գործարքներից առաջացած չիրացված օգուտները հաշվանցվում են նույն ասոցիացված ընկերությունում համապատասխան ներդրման նկատմամբ:

Ասոցիացված կազմակերպություններ

Ասոցիացված կազմակերպությունն այն կազմակերպությունն է, որտեղ Խումբը նշանակալի ազդեցություն ունի, և որը չի հանդիսանում ներդրողի ո'չ դուստր, ո'չ էլ համատեղ ձեռնարկում: Նշանակալի ազդեցություն է համարվում ներդրման առարկա հանդիսացող ընկերության ֆինանսական և գործառնական քաղաքականության գծով որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորությունը, բայց ոչ այդ քաղաքականության վերահսկողությունը կամ համատեղ վերահսկողությունը:

Ասոցիացված կազմակերպությունների գործունեության արդյունքները, ինչպես նաև ակտիվներն ու պարտավորությունները ներառված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ հաշվապահական հաշվառման բաժնեմասնակցության մեթոդով, բացառությամբ վաճառքի համար մատչելի ակտիվների, որոնք հաշվառվում են՝ համաձայն ՖՀՄՍ 5 «*Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատվող գործունեություն*»: Համաձայն բաժնեմասնակցության մեթոդի՝ ասոցիացված ընկերություններում ներդրումները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում գրանցվում են ինքնարժեքով, իսկ հետագայում՝ ճշգրտվում ձեռքբերումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում ընկերության բաժնեմասի փոփոխությունների չափով՝ նվազեցված առանձին ներդրումների արժեզրկման չափով: Խմբի մասնակցությունից դուրս ասոցիացված կազմակերպության կորուստները չեն ճանաչվում, եթե միայն Խումբն իրավական կամ կառուցողական պարտավորություններ չի կրել կամ ասոցիացված կազմակերպության անունից վճարումներ չի իրականացրել:

Ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռքբերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գուդվիլ: Գուդվիլը ներառված է ներդրման հաշվեկշռային արժեքում և արժեզրկման համար գնահատվում է որպես ներդրման մաս: Ձեռքբերման արժեքի ցանկացած գերազանցում ձեռքբերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասի նկատմամբ, վերագնահատումից հետո, ուղղակիորեն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Խմբի և ասոցիացված կազմակերպության միջև տեղի ունեցած գործարքներից առաջացած շահույթը և վնասը բացառվում են տվյալ ասոցիացված ընկերությունում Խմբի համապատասխան բաժնեմասի սահմաններում:

3.2 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.70 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 537.26 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ

հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	20 տարի
Մեքենասարքավորումներ	-	1-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5 տարի
Տնտեսական գույք	-	1-5 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի:

3.5 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլիներին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է

վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.6 Վարձակալված ակտիվներ

Համաձայն ՀՀՄՍ 17-ի՝ «*Վարձակալություն*», վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ, ավելի ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով՝ գումարած միանվագ վճարները, եթե այդպիսիք կան: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:

Վարձակալված ակտիվների հետագա հաշվառումը, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով Խմբին պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարների չափով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

3.7 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Ներկայացված ժամանակաշրջաններում Խումբը չունի որպես այլ համապարփակ արդյունքում իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 15.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը, ինչպես նաև ցուցակված պարտատոմսերը, որոնք նախկինում՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգված էին որպես մինչև մարման ժամկետը պահվող:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: Այս մոդելը փոխարինում է ՀՀՄՍ 39-ում կիրառվող «կրած վնասների մոդելին»: Նոր պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Խմբի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանավչվում են երկրորդ դասի ակտիվների համար:

Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Քանի որ ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական պարտավորությունների հաշվառումը հիմնականում մնում է այնպիսին, ինչպիսին էր ՀՀՄՍ 39-ի պահանջներով, ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն չի ունեցել Խմբի ֆինանսական պարտավորությունների վրա:

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը և ֆինանսական վարձակալության գծով

պարտավորությունները: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 15.2-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոց-ների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.10 Զուտ ակտիվներ

Կուտակված արդյունքը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Մայր ընկերության սեփականատերերի հետ իրականացված բոլոր գործարքները գրանցվում են առանձին՝ սեփական կապիտալում:

3.11 Շնորհներ և նվիրատվություններ

Դրամաշնորհները ստացվում են որոշակի նպատակներով և նախատեսված չեն Խմբի ընդհանուր օգտագործման համար: Այս դրամաշնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Շնորհը, որը հատկացվում է Կազմակերպությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Անսահմանափակ նվիրատվությունները հասանելի են ընդհանուր նպատակների համար, ինչպես սահմանված է Խմբի կառավարման փաստաթղթերում: Հետևաբար, անսահմանափակ միջոց ճանաչված նվիրատվությունները ճանաչվում են որպես հասույթ, երբ դառնում են ստացման ենթակա:

3.12 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.13 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

3.14 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) ոչ դրամային հատուցումները (ինչպիսիք են առողջապահական ծառայություններ):

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

Աշխատակիցները Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային ֆոնդից ստանում են կենսաթոշակային նպաստներ՝ օրենքներին և կանոնակարգերին համապատասխան: Խումբը տարվա ընթացքում ներդրումներ է կատարում Կառավարության Կենսաթոշակային ֆոնդին՝ օրենքով սահմանված գործող դրույքաչափով: Այս ներդրումները ծախսագրվում են առաջացման պահին:

3.15 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ի (Դուստր ընկերություն) կողմից մատուցված բժշկական ծառայություններից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հող, շենքեր և շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք և այլն	Կառուցման ընթացքում գտնվող ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	935,805	124,624	106,404	67,875	-	718,511
Ավելացում	11,854	14,825	-	17,089	4,648	48,416
Ներքին շարժ	-	-	-	4,648	(4,648)	-
Օտարում	(27,370)	(1,266)	(2,940)	-	-	(31,576)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	920,289	138,183	103,464	89,612	-	1,251,548
Ավելացում	-	30,543	-	8,449	91,887	130,879
Օտարում	-	(1,821)	-	(2,463)	-	(4,284)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	920,289	166,905	103,464	95,598	91,887	1,378,143
Կուտակված մաշվածություն և արժեզրկում						
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	521,912	62,944	41,136	11,217	-	121,012
Տարվա հաշվարկ	32,636	13,761	9,909	9,197	-	65,503
Օտարման հետևանքով դուրսգրում	(26,026)	(943)	(2,940)	(32)	-	(29,941)
Արժեզրկման հակադարձում	(115,067)	-	-	-	-	(115,067)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	413,455	75,762	48,105	20,382	-	557,704
Տարվա հաշվարկ	30,645	13,557	9,908	12,692	-	66,802
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(1,446)	-	(250)	-	(1,696)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	444,100	87,873	58,013	32,824	-	622,810
Հաշվեկշռային արժեք						
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	506,834	62,421	55,359	69,230	-	693,844
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	476,189	79,032	45,451	62,774	91,887	755,333

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմում է հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 72,178 հազար դրամ):

2020թ. ավելացումներում ներառված են Գրացիա միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ի շենքի սկզբնական արժեքին կապիտալացված ծախսումներ՝ 91,887 հազար դրամ, իսկ 2019թ. Ավելացումները ներառում են կապիտալացված ծախսումներ՝ 8,317 հազար դրամ ավելացված Երևանի կենտրոնական գրասենյակի շենքի և 3,537 հազար դրամ՝ Լոռի սոցիալական կենտրոնի շենքի սկզբնական արժեքներին:

5 Պաշարներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Հումք	597,656	181,311
Մթերք	42,000	158
Վառելիք	8,272	1,184
Շինանյութ	3,060	2,200
Պահեստամասեր	1,424	1,404
Այլ	4,063	2,020
	656,475	188,277

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 1,595,759 հազար դրամ (2019թ.՝ 246,442 հազար դրամ):

Պաշարները գրավադրված չեն:

6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	19,732	18,577
Այլ դեբիտորական պարտքեր	428	1,315
	20,160	19,892
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	4,294	7,135
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	5,710	426
	10,004	7,561
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	30,164	27,453

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Տե՛ս ծանոթագրություն 16՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

7 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Կանխիկ միջոցներ	7,743	1,965
Բանկային հաշիվներ	766,503	245,309
	774,246	247,274

Տե՛ս ծանոթագրություն 16՝ դրամարկղում և բանկում մնացորդների արժույթների բացահայտման համար:

8 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2020թ.	2019թ. (վերաներկայացված)
Տարեսկզբի մնացորդ	328,421	321,524
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	-	45,689
Փոխանցում եկամտին վերաբերող շնորհից	50,819	4,087
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 12)	(44,437)	(42,879)
Տարեվերջի մնացորդ	334,803	328,421

9 Եկամտին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2020թ.	2019թ. (վերաներկայացված)
Տարեսկզբի մնացորդ	253,813	265,212
Ստացված շնորհներ	4,005,823	940,680
Փոխանցում ակտիվներին վերաբող շնորհներին	(50,819)	(4,087)
Դրամաշնորհի հետվերադարձ	(3,181)	-
Ճանաչված եկամուտ (տես՝ ծանոթ. 12)	(2,833,459)	(947,992)
Տարեվերջի մնացորդ	1,372,177	253,813

Դրամաշնորհները ստացվում են հատուկ նպատակով և մատչելի չեն Խմբի ընդհանուր օգտագործման համար:

Նվիրատվությունները հասանելի են ընդհանուր օգտագործման համար, ինչպես նշված է Կազմակերպության կանոնադրական փաստաթղթերում:

Հաշվետու տարում ստացված ավելացումները ներառում են՝

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կարմիր Խաչի միջազգային ֆեդերացիա	1,272,348	180,632
Միավորված ազգերի կազմակերպություն	549,422	147,038
Շվեցարական Կարմիր Խաչի գրասենյակ	522,803	177,698
Կարմիր Խաչի միջազգային կոմիտե	447,821	97,443
Դանիական Կարմիր Խաչի գրասենյակ	282,544	129,220
Ավստրիական Կարմիր Խաչի գրասենյակ	260,815	162,099
ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	150,638	-
Գերմանական Կարմիր Խաչի գրասենյակ	123,026	7,180
ՀՀ Առողջապահության նախարարություն	39,796	24,897
Անհատական նվիրատվություններ	119,514	3,721
Այլ	237,096	10,752
	4,005,823	940,680

10 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չապահովված բանկային վարկեր	-	30,079
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	-	1,500
	-	31,579

Տե՛ս ծանոթագրություն 16՝ վարկերի և փոխառությունների արժույթների բացահայտման համար:

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Առևտրային կրեդիտորական պարտքեր	35,546	10,453
Հատուցումներ աշխատակիցներին	23,610	17,418
Ստացված կանխավճարներ	3,777	3,339
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	3,224	12,152
Այլ	258	32
	66,415	43,394

Խմբի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 16-ում:

12 Նվիրատվությունից եկամուտ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ (տես՝ ծանոթ. 8)	44,437	42,879
Եկամտին վերաբերող շնորհներից եկամուտ (տես՝ ծանոթ. 9)	2,833,459	947,992
	2,877,896	990,871

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Ընթացիկ հարկ	1,733	13,333
	1,733	13,333

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(45,784)		160,289	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2019թ.՝ 20%)	(8,241)	18.0	32,058	20.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	9,974	(21.8)	(18,725)	(11.7)
Շահութահարկի գծով ծախս	1,733	(3.8)	13,333	8.3

14 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

14.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումների արժեզրկում

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խումբն իրականացրել է ասոցիացված կազմակերպություններում կատարված ներդրումների արժեզրկման հայտանիշի ստուգում և եզրակացրել է, որ առկա են հիմքեր հավատացած լինելու համար, որ ասոցիացված կազմակերպությունները չեն կարող հանդես գալ որպես անընդհատ գործող: Արդյունքում, ղեկավարությունը գնահատել է, որ այս ներդրումներն արժեզրկված են:

14.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ի (դուստր ընկերություն) հիմնական միջոցների արժեզրկում

Խումբն արժեզրկել է «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ի այն բոլոր հիմնական միջոցները, որոնք ձեռք են բերվել մինչև 2017թ. հունվարի 1-ը: Գնահատումները կատարվել են 2011թ. փետրվարի 7-ին անկախ գնահատողների կողմից: Համաձայն այս գնահատումների, այն շենքը, որտեղ իր գործունեությունն է ծավալում դուստր ընկերությունը, համարվում է վթարային շենք: Ղեկավարությունը վերանայել է շենքերի ամբողջ դասը 2019թ.-ին և հակադարձել շենքի արժեզրկումը:

15 Ֆինանսական գործիքներ

15.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

15.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	20,160	19,892
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	771,246	247,274
	794,406	267,166

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	-	31,579
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	59,414	27,903
	59,414	59,482

16 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ շնորհներից և նվիրատվություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար
Ֆինանսական ակտիվներ	
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	65,795
Զուտ արդյունք	65,795

Հոդված

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար
Ֆինանսական ակտիվներ	
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	1,583
Զուտ արդյունք	1,583

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2019թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2019թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2019թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ 10%-ով (2019թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2020թ.	2019թ.
Շահույթ կամ վնաս	6,579	158
	6,579	158

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Տոկոսադրույքային ռիսկ

Խումբը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի փոխառու միջոցներ տեղական արժույթով:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Խմբի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Դեբիտորական պարտքեր	20,160	19,892
Մնացորդներ բանկերում	766,503	245,309
	786,663	265,201

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2020թ.	Անտոկոս	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		
Մինչև 1 տարի	59,414	59,414
	59,414	59,414

2019թ.	Անտոկոս	Գործիքներ հաստա-տուն տոկոսա-դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 1 տարի	27,903	31,579	59,482
	27,903	31,579	59,482

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

17 Պայմանականություններ

17.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ Հարկային օրենսգրքի տրանսֆերային գնագոյացման կարգավորումներին վերաբերող գլուխը, որը սահմանում է առանձնահատկություններ՝ փոխկապակցված կողմերի միջև կատարվող գործարքների վերաբերյալ, սահմանում է հարկային մարմնի կողմից այդ գործարքները վերահսկվող համարելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ ծանուցում և փաստաթղթավորում ներկայացնելու կարգը: Նշված կարգավորումների նպատակն է պարզել, թե արդյոք փոխկապակցված կողմերի միջև գործարքների ֆինանսական ցուցանիշները համապատասխանում են պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին, ինչպես նաև չհամապատասխանելու դեպքում՝ սահմանվում է դրանց ճշգրտման կարգը հարկման բազան հաշվարկելու նպատակով: Նշված կարգավորումների կիրառությունը ենթակա է հարկային մարմնի կողմից առանձին ստուգման և պահանջված փաստաթղթավորման բացակայությունը կամ ոչ պատշաճ ներկայացնելը կարող է հանգեցնել էական հետևանքների:

Օրենսգրքի նշված գլուխը պարունակում է շատ անորոշություններ, իսկ նախկինում Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ կարգավորումներ չեն կիրառվել: Արդյունքում՝ չկա նմանատիպ կարգավորումների մեկնաբանման և կիրառման բավարար փորձառություն:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ Խումբն իրականացրել է տրանսֆերային գնագոյացման կարգավորումներին համապատասխան վերլուծություն, որի արդյունքում եզրահանգել է, որ այս փոփոխության ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

18 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, դուստր ընկերությունները (առանձին ֆինանսական հաշվետվությունների համար), ասոցիացված ընկերությունները, դուստր և ասոցիացված ընկերությունների բաժնետերերը, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

18.1 Վերահսկողություն

Խմբի գլխավոր մայր ընկերությունն է «Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» ՀԿ-ն, որը գործունեություն է ծավալում Հայաստանում, գտնվում է Հայաստանի Հանրապետություն, 0015 ք. Երևան, Պարոնյան փող 21/1 հասցեում և չի պատրաստում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ:

18.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	26,350	31,045
Ստացված փոխառության մարում	1,500	-
	27,850	31,045

Հազար դրամ Մնացորդներ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	2,506	3,438
Ստացված փոխառություններ	-	1,500
	2,500	4,938

19 Համադրելի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Նախորդ ժամանակաշրջաններում Խումբը փոխել է դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունների համախմբման քաղաքականությունը, իսկ Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն ուղղվել են հետադարձ՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների:

Կատարվել են որոշ վերահաշվարկներ, որոնց արդյունքում տեղ են գտել ներքոհիշյալ ճշգրտումները:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Նախքան վերաներկայացումը	Վերաներկայացում	Վերաներկայացումից հետո
Հիմնական միջոցներ (ճշգրտում 1,2)	620,929	72,915	693,844
Ոչ նյութական ակտիվներ (ճշգրտում 2)	9,076	289	9,365
Հետաձգված հարկային ակտիվներ (ճշգրտում 2)	-	764	764
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար (ճշգրտում 2)	-	580	580
Պաշարներ (ճշգրտում 1,2)	145,885	42,392	188,277
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (ճշգրտում 2)	7,624	19,829	27,453
Մնացորդներ դրամարկղում և բանկերում (ճշգրտում 2)	30,096	217,178	247,274

Հազար դրամ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Նախքան վերա-ներկայացումը	Վերաներկա-յացում	Վերաներկա-յացումից հետո
Վաճառքի համար պահվող ակտիվներ (ճշգրտում 2)	353,947	(353,947)	-
Կուտակված արդյունք (ճշգրտում 2)	357,793	152,371	510,164
Ակտիվներին վերաբերող շնորհներ (ճշգրտում 1)	365,213	(36,792)	328,421
Եկամտին վերաբերող շնորհներ (ճշգրտում 1)	217,021	36,792	253,813
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (ճշգրտում 2)	15,742	27,652	43,394
Վաճառքի համար պահվող պարտավորություններ (ճշգրտում 2)	180,023	(180,023)	-
	2,303,349	-	2,303,349

Ճշգրտում 1

Հիմնական միջոցների և պաշարների հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության արդյունքում կանոնադրական նպատակներով պահվող անձեռնմխելի գույքը և 50,000 դրամից պակաս սկզբնական արժեքով ակտիվները համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում են որպես պաշար: Այս մասով ճշտվել են հիմնական միջոցների, պաշարների, ակտիվներին վերաբերող շնորհների և եկամտին վերաբերող շնորհների մնացորդները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Ճշգրտման արդյունքում 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- Հիմնական միջոցները նվազել է 36,792 հազար դրամով,
- Պաշարներն ավելացել են 36,792 հազար դրամով
- Ակտիվներին վերաբերվող շնորհները նվազել են 36,792 հազար դրամով,
- Եկամտին վերաբերվող շնորհներն աճել են 36,792 հազար դրամով:

Ճշգրտում 2

«Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ի ակտիվների և պարտավորությունների վերադասակարգումը վաճառքի համար պահվող ակտիվների և պարտավորությունների հակադարձվել են: Այս մասով ճշտվել են հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, հետաձգված հարկային ակտիվների, ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար տրված կանխավճարների, պաշարների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, դրամարկղում և բանկերում առկա մնացորդների, առևտրային և այլ կրեդիտորական պարտավորությունների և կուտակված արդյունքի մնացորդները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Ճշգրտման արդյունքում 2019թ. դեկտեմբերի 31 դրությամբ.

- Ոչ ընթացիկ ակտիվներն ավելացել են 111,339 հազար դրամով,
- Ընթացիկ ակտիվներն նվազել են 111,339 հազար դրամով,
- Կուտակված արդյունքն ավելացել է 152,371 հազար դրամով,
- Ընթացիկ պարտավորությունները նվազել են 152,371 հազար դրամով:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին մասին համախմբված հաշվետվություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին մասին համախմբված հաշվետվության մեջ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ-ի ֆինանսական արդյունքի վերադասակարգումը որպես ընդհատվող գործունեությունից շահույթ մինչև հարկումը հակադարձվել է: Այս մասով կատարված ճշգրտումները ներկայացված են ստորև:

Ճշգրտման արդյունքում 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար.

- Հիվանդանոցային ծառայություններից հասույթն ավելացել է 309,981 հազար դրամով,
- Ակտիվների արժեզրկման հակադարձումից եկամուտն ավելացել է 115,067 հազար դրամով,
- Այլ ծառայություններից եկամուտն ավելացել է 3,524 հազար դրամով,
- Աշխատակիցներին տրված փոխհատուցումներն ավելացել են 131,756 հազար դրամով
- Գրասենյակային և կոմունալ ծախսերն ավելացել են 60,905 հազար դրամով
- Մաշվածության և պահպանման ծախսերը ավելացել են 28,303 հազար դրամով
- Այլ ծախսերը ավելացել են 40,043 հազար դրամով
- Շահութահարկի գծով ծախսը ավելացել է 13,147 հազար դրամով
- Ընդհատվող գործունեությունից զուտ շահույթը մինչև հարկումը նվազել է 154,418 հազար դրամով: